295

1. Կհարցնեն մարդիկ հաճախ՝
Ո՞ւր է Անոր գալուստը,
Եվ անօրեն մարդկանց պատիժ՝
Արագահաս կորուստը:
«Ահա կուգամ,- կըսե Տերը,-
Պիտի նայեմ քու գործերդ,
Պիտի քննեմ սրտիդ սերը,
Աջ պիտ կանգնին Իմ գառները»:

2. Ինչպես օրերում սուրբ Նոյի,
Որ կաղաչեր մտնել տապան,
Նույնպես այսօր մեր օրերում,
Կկանչե մեզ Հիսուս Արքան:
Արդ կթակե սրտիդ դուռը,
Բա՛ց, որ մտնե Հիսուս Տերը,
Կմոռանաս Քու ցավերդ,
Կմոռանաս Քու վշտերդ:

3. Երբ որ հնչե փողը վերջին,
Պիտի իջնե Աստծո Որդին,
Իր մոտ տանե Իր սուրբերին,
Պիտի դատե ողջ աշխարհին:
Հիմա դատե՛ ինքզինքդ, տե՛ս,
Ապաշխարե՛, որ փրկվիս,
Դատաստանեն ազատ ըլլաս,
Հիսուսի հետ հավերժ ապրիս: